**Արձանագրություն N 2**
«ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-15/3-2» ծածկագրով գնահատող
հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20 սեպտեմբերի, 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | Վ. Ղազարյան |
| ԳՊ/ԳԱՊ | |
| Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ | Լ. Անանիկյան, Հ. Բաբայան |
| ԳՊ/ԲԱ | Ա. Շահինյան, Հռ. Կոշեցյան |
| Քարտուղար՝ | Է. Գրիգորյան |

1. «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-15/3-2» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը ընթացակարգին ներկայացված հայտերը բացեց 20 սեպտեմբերի 2016թ.-ին, ժամը 10:00-ին www.armeps.am համակարգի միջոցով, Կառավարական տուն 3 հասցեում:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | |
|---|---|---|
| 1. | «Սմարթլայն» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 110 |
| 2. | «Յասոն» ՍՊԸ | ք. Երևան, Վրացական 16, հեռ. (010)235487 |
| 3. | «Սաքի» ՍՊԸ | ք. Գորիս, Անկախության 2/31, հեռ. (091)431563 |
| 4. | «Միարմա գրուպ» ՍՊԸ | ք. Երևան, Տիգրան Մեծի 31 շենք. 102 բն., հեռ. (091) 018921 |
| 5. | «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ | ք. Երևան, Ադոնցի փ. 1 շ., բն. 7, հեռ. (010) 234309 |
| 6. | «Օֆիս Պրո» ՍՊԸ | ք. Երևան. Միկոյան 9, բն. 19 , հեռ. (010)662052 |

Համակարգում գրանցված մյուս հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

3. Մասնակիցների կողմից ծրարները կազմվել և ներկայացվել են armeps համակարգով՝ հրավերի պահանջներին համապատասխան:

4. «Յասոն» ՍՊԸ, «Օֆիս Պրո» և «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են եղել հրավերով պահնջվող բոլոր փաստաթղթերը, սակայն փաստաթղթերը ներկայացվել են բնօրինակից արտատպման եղանակով և հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: «Միարմա գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էր մասնակցության դիմումը և մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին հայտարարությունը: Մյուս բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը ներկայացվել է առանց հաստատման: «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «Սաքի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են եղել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը համապատասխանել են հրավերով սահմանված պահանջներին: «Սաքի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 3.1 չի համատասխանել հրավերով սահմանված պահանջներին:

6. Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Սաքի» ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2016թ. սեպտեմբերի 23-ին ժամը 10:00-ին, Կառավարական տուն 3 613 աշխատասենյակում:

Հանձնաժողովի.
նախագահ՝ ---------- Վ. Ղազարյան

Անդամներ՝ ---------- Լ. Անանիկյան

---------- Հ. Բաբայան

---------- Ա.Շահինյան

---------- Հռ. Կոշեցյան

Քարտուղար՝ ---------- Է. Գրիգորյան